ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Հեռ. (0231)60136 ,
gay.armavir@mta.gov.am

N 135
12 հոկտեմբեր 2016թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի կողմից 2016 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Սեյրան Մարկոսյան

Կատ.՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 50

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետով.

Որոշում եմ `

1.Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 42 որոշումը :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 27

ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ <ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ> ՀՈԱԿ-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Գնումների մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի երրորդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <ա> և <բ> պարբերությունների և 22-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի <Արվեստի դպրոց> ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել Գայի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ Տաթևիկ Հարությունյանին,իսկ գնումների համակարգող՝ Գայանե Հակոբյանին:

2.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 51

ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածի, Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի պահանջներով.

Որոշում եմ՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի ներքին աուդիտի փոփոխված կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 49

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ ենթակետով, < Հրապարակային սակարկությունների մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գայ համայնքում 2016 թվականի սեպտեմբերի 19-ին կայացած հողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

Որոշում եմ՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Գայ համայնքում 2016 թվականի սեպտեմբերի 19-ին կայացած 1,0652 հա հողատարածքի և 0,4742 հա հողատարածքի աճուրդային կարգով վաճառքի արդյունքներով կազմված արձանագրությունները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված Ստեփան Մակիչի Մուրադյանի հետ կնքել հողամասերի առուվաճառքի պայմանագիր՝ ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ~ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետի, 64-րդ հոդվածի 16-րդ կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայասատանի Հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածների ,<Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշման պահանջրով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրված հաշվեկշռային արժեքի մասին տեղեկանքը.

Որոշում եմ՝

1.Վերականգնել՝ Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն համարվող, Ջրային տնտեսության պետական կոմիտեին նախկինում հատկացված հողերի հողհատկացման հիմքերը:

2.Որոշման 1-ին կետում նշված հողամասի հողհատկացման մակերեսները հիմք ընդունել քարտեզագրողի, գեոդեզիստի , չափագրողի և հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

3. Անշարժ գույքին տրամադրել Երևանյան 33/5 հասցեն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետի,64-րդ հոդվածի 16-րդ կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածների, < Իրավական ակտերի մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշման պահանջներով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Զրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրված հաշվեկշռային արժեքի մասին տեղեկանքը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող , համայնքային սեփականություն համարվող, Զրային տնտեսության պետական կոմիտեին նախկինում հատկացված հողերի հողհատկացման հիմքերը:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հողհատկացման մակերեսները հիմք ընդունել քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից հաստատ-ված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

3.Անշարժ գույքին տրամադրել հասցե ՝ Արմավիրի մարզ, Գայ համայնք, Երևանյան 43/1:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՁՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշման պահանջներով.

Որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի Երևանյան փողոց թիվ 39/1 հասցեում գտնվող հողամասի փոփոխված հատակագիծը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հողհատկացման մակերեսները հիմք ընդունել քարտեզագրողի , գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

3. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Գայ համայնք, Երևանյան փողոց 39/1:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 16-րդ կետի , < Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստան Հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածների ,< Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշման պահանջներով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրված հաշվեկշռային արժեքի մասին տեղեկանքը.

Որոշում եմ `

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող , համայնքային սեփականություն համարվող , Ջրային տնտեսության պետական կոմիտեին նախկինում հատկացված հողերի հողահատկացման հիմքերը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հողահատկացման մակերեսները հիմք ընդունել քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի հողաշինարարի որոկավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

3. Անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Արմավիրի մարզ, Գայ համայնք, Երևանյան 31/16:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 44

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ, 36-րդ հոդվածներով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գայ համայնքի բնակչուհի Զեփյուռ Ղուկասյանի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

Որոշում եմ `

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչներ Ալիկ Գեղանի Մնացականյանի `ծնված 28.05.2013թ. և Միլենա Գեղամի Աբրահամյանի `ծնված 28.09.2015թ, նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով նրանց հարազատ տատիկին՝ Զեփյուռ Ղուկասյանին:

2.Հսկողություն սահմանել Ալիկ Գեղամի Մնացականյանի և Միլենա Գեղամի Աբրահամյանի նկատմամբ նշանակված խնամակալ Զեփյուռ Ղուկասյանի գործունեության նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 43

ՍՈՒՐԵՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ,36-րդ հոդվածներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակչուհի Օսաննա Գրիգորյանի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Սուրեն Գևորգի Նավասարդյանի (23.05.1999թ) նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակելով նրա հարազատ տատիկին՝ Օսաննա Գրիգորյանին:

2. Հսկողություն սահմանել Սուրեն Նավասարդյանի նկատմամբ նշանակված հոգաբարձու Օսաննա Գրիգորյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 42

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության կառավարության 2011թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

Որոշում եմ՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգը, համաձայն հավելվածների:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ և հիմք ընդունելով Վլադիմիր Մկրտչյանի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը,

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող , Վլադիմիր Մկրրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 2,0հա հողատարածքին (ԿԾ 0225-0001) տալ հասցե՝ Երևանյան փողոց , թիվ 48:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 40

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ստեփան Գրիգորյանի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող Խաղաղության 1 փողոց տուն 2 հասցեում գտնվող (ԿԾ 091-001) 0,22 հա հողատարածքից առանձնացված 275 քմ հողատարածքին տալ հասցե՝ Խաղաղության 1 փողոց տուն 2/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասին 17-րդ կետով և հիմք ընդունելով Ստեփան Գրգորյանի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Խաղաղության 1 փողոց , տուն 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Ստեփան Արտավազդի Գրիգորյանի (ծնված 03.04.1961թ) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0,0275հա օրինական հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ (բնակելի տուն՝ 30,20 քմ կառուցված 1966թ, բնակելի տուն՝30,80 քմ կառուցված 1967թ, բաց պատշգամբ՝ 6,20 քմ կառուցված 1967թ):
Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի , չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Ստեփան Արտավազդի Գրիգորյանի (ծնված 03.04.1961թ) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի , հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական :

4. Բնակելի տանը տրամադրել Խաղաղության 1 փողոց , տուն 2/1հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Լուսիկ Գրիգորյանի 2016 թվականի օգոստոսի 23 –ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Խաղաղության 1 փողոց, տուն 2 հասցեում գտնվող գույքային միավորներին նկատմամբ քաղաքացի Լուսիկ Գրիգորյանի (ծնված՝11.03.1940թ.) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.1914 հա օրինական հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններին կատմամբ (բնակելիտուն՝ 310.2 քմ կառուցված 1966-1967թթ., ջրավազան 14.8քմ կառուցված 1970թ., զուգարան 2.2քմ կառուցված 1970թ., թռչնանոց 2.5քմ կառուցված 1972թ., թռչնանոց 6.2քմ կառուցված 1972թ., պահեստ՝ 13.4քմ կառուցված 1978թ.) նկատմամբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք. շինությունները բվարարում են <Հայաստանի Հանրապետության վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցելու Լուսիկ Գրիգորյանի (ծնված՝11.03.1940թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել Խաղաղության 1 փողոց, տուն 2 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2016թվականի օգոստոսի 26-ի թիվ 34 որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

գ.Գայ